«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակութկունների զարգացումը ոչ ավանդական նկարչության գործընթացում

Հաստատություն՝ Աբովյան համայնքի《Աբովյան քաղաքի թիվ 12 մանկապարտեզ》ՀՈԱԿ

Դաստիարակ՝ Լիանա Մեսրոպյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023թ

Բովանդակություն

Ներածություն---------- 3

Նկարչությունը որպես զարգացնող գործընթաց ---------- 4

Նկարչության հիմնական խնդիրները---------- 5

Նախադպրոցական տարիքում իրականացվող նկարչության տեսակները---------- 5

Ոչ ավանդական նկարչության նշանակությունն ու առանձնահատկությունը---------- 6

Ոչ ավանդական նկարչության տեսակները---------- 6

Ոչ ավանդական նկարչության միջոցները---------- 7

Ի՞նչ նպատակ է հետապնդում ոչ ավանդական նկարչությունը---------- 8

Ինչու՞մ է ոչ ավանդական նկարչության գաղտնիքը---------- 9

Ոչ ավանդական նկարչության տեսակներն ու միջոցները տարիքային տարբեր խմբերում---------- 10

Ոչ ավանդական նկարչության հետաքրքրաշարժ պարապմունքների ցանկից՝ 《Մանր աղով նկարչություն》 ---------- 13

Եզրակացություն---------- 16

Օգտագործված գրականության ցանկ ---------- 17

Ներածություն

Նախադպրոցական տարիքի երեխաների ուսունադաստիարակչական գործում իր կայուն տեղն է զբաղեցնում գեղագիտական դաստիարակությունը: Գեղագիտական դաստիարակությունը նպաստում է նախադպրոցականի ներդաշնակ զարգացմանը՝ հուզական ոլորտի, զգայական փորձի հարստացման, ստեղծագործ մտքի, գեղագիտական ճաշակի զարգազմանը: Գեղագիտական դաստիարակության բնագավառում կարևորագույն տեղ է զբաղեցնում կերպարվեստային գործունեությունը: Կերպարվեստային գործունեության բաժնից առանձնացնելով նկարչություն բաժինը, սկսեք ուսումնասիրել նրա նշանակությունը, կարևորությունը և արդյոք արդի ժամանակներում, արդարացված է ոչ ավանդական կամ այլընտրանքային նկարչություն: Ոչ ավանդական կամ այլտընտրանքային նկարչությունը, նկարչության ձև է, որը չունի սահմաններ և արգելքներ, որտեղ երեխան կարող է նկարել իրեն շրջապատող ցանկացած իրով, ցանկացած ձևով և միջոցով: Ոչ ավանդական նկարչության միջոցով բացահայտվում է երեխայի ներաշխարհը, զարգանում է երևակայությունը, ստեղծագործ միտքը, ինքնավստահությունը, ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը, գունազգացողությունը: Ոչ ավանդական նկարչությունը նաև կարելի է համարել մի միջոց, որը զարգացնում է երեխայի մտավոր ունակությունները, գրամոտորիկան, հուզագեղագիտական և կամային ոլորտը: Ոչ ավանդական եղանակով նկարչությունը բացում է նոր շրջանակներ, նոր մտքեր, ոչ ավանդական նկարչությունը նաև հետաքրքրաշարժ գործընթաց է, որը բացի զարգացնող նշանակությունից ունի ևս մեկ, ոչ պակաս կարևոր նշանակություն՝ երեխային պարգևում է ուրախություն և հիացմունք: Այստեղից կարելի է հետևություն անել, որ միայն վրձնով նկարելը կաևող է դառնալ ձանձրալի ու անհետաքրքիր աշխատանք:Ոչ ավանդական նկարչության միջոցով երեխան սկսում է նկարել իր շրջապատում ցանկացած առարկայով, ցանկացած առարկայի վրա և իր իսկ նախաձեռնողականությամբ, ինքնուրույն սկսում է երևակայել ու նկարել, այս ամենը օգնում է երեխայի մանկական վախերի վերացմանը, զարգացնում է ինքնավստահությունը,սեփական մտքի ազատ արտահայտվելու կաևողությանը, տարածական մտածողությանը: Ոչ ավանդական կամ այլընտրանքային նկարչությունը սովորեցնում է աշխատել տարբեր նյութերով և երեխայի մոտ զարգանում է կոմպոզիցիայի, ռիթմի, կոլորիտի գունային ընկալումը:

Նկարչությունը որպես զարգացնող գործընթաց

Նախադպրոցական տարիքի երեխայի համար նկաչությունը նույնքան բնական պահանջմունք է, որքան խաղը և նկարչությունը ոչ միայն զգացմունքների արտահայտման ձև է, այլև միջոց՝ ճանաչելու շրջապատը:Միաժամանակ ունենալով զարգացնող դեր՝ երեխայի աշխարհընկալման գործում:Երեխան սկսում է նկարել դեռ վաղ մանկությունից, սկզբում խզբզելով, շրձանաձև պտույտներ անելով և այս ամենից մեծ բավականություն ստանալով՝ իր ստեղծած առարկաներին տալիս է անվանումներ, ապա նկատելով ուրիշների նկարածը, փորձում է նկարել այնպես, որ իր նկարածն էլ հասկանալի լինի այլոց համար, որտեղից էլ սկսում է զարգանալ երեխայի երևակայությունը, գունազգացողությունը, տարածական մտածողություն և աշխարհ ընկալումը:

Նկարչության հիմական խնդիրները

- նկարչական ունակությունների և կարողությունների ձևավորումը,
- գունաճանաչությունը
- երևակայության զարգացումը
- խոսքի զարգացումը
- մտածողության զարգացում
- մոտորիկայի զարգացում

Նախադպրոցական տարիքում իրականացվող նկարչության տեսակները

- առարկայական(բնօրինակից)
- դեկորատիվ
- թեմատիկ ստեղծագործական(մտահղացմամբ):

Սակայն բոլորիս հայտնի է, որ ժամանակակից սերունդը լինելով ավելի տեղեկացված, շուտ է հոգնում և ձանձրանում միատեսակ ու կրկնվող աշխատանքներից և գործունեություններից, խաղերից և երեխայի համար ձանձրալի է անվերջ նկարել վրձնով ու մատիտով: Եվ այստեղ մեզ օգնության է գալիս ոչ ավանդական կամ այլընտրանքային նկարչությունը, որը ոչ պակաս կրթադաստիարակչական և զարգացնող նշանակություն ունի:



Ոչ ավանդական նկարչության նշանակությունն ու առանձնահատկությունը

Ոչ ավանդական կամ այլ ընտրանքային նկարչության կիրառումն ունի կարևոր նշանակություն, հատկապես նախադպրոցական տարիքում:Ոչ ավանդական եղանակով նկարչությունը երեխային սովորեցնում է տեսնել գեղեցիկը ամենուր՝ տանը, բակում, խմբասենյակում, խաղալիս և նույնիսկ զբոսնելիս, իսկ գեղեցիկը նկատելը, տեսնելն ու սիրելը ունի կարևորագույն նշանակություն նախադպրոցականի սահուն և ճիշտ զարգացման գործընթացում: Ոչ ավանդական նկարչության առանձնահատկություններն են՝ ստեղծագործ մտքի անսահման թռիչք, սեփական մտքերի ազատ և անկաշկանդ արտահայտման կարողության ձեռքբերում, ինքնավստահություն, ինքնուրույնություն, գունազգացողություն, երևակայություն, ինչու՞ ոչ, նաև նախաձեռնողականություն: Ոչ ավանդական եղանակով նկարչությունը ունի ևս մեկ կարևոր առանձնահատկություն՝ զվարճալի է, հետաքրքիր, ուրախ և հիացնող,ապահովում է երեխայի բարձր տրամադրությունն ու ուրախությունը:

Ոչ ավանդական նկարչության տեսակները՝

- հարթ մակերեսով նկարչություն
- անհարթ մակերեսով նկարչություն
- տարբեր միջոցներով նկարչություն:



Ոչ ավանդական նկարչության միջոցները

Ոչ ավանդական կամ այլընտրանքային նկարչության գործընթացում ևս, շարունակում ենք ուսուցողական և ճանաչողական գործընթացը, երեխաներին ծանոթացնելով ոչ ավանդական նկարչության միջոցներին: Ոչ ավանդական նկարչության մեթոդով աշխատելիս ևս, երեխաներին ծանոթացնում ենք ներկանյութերին(բնական ներկանյութեր, գուաշ, ջրաներկ) և դրանցով աշխատելու բազմաբնույթ ձևերին, որը հանդիսանում է երեխայի գունազգացողության, վառ և ինքնատիպ երևակայության զարգացմանը: Ոչ ավանդական նկարչության մակերես կարող է հանդիսանալ մեր շրջապատում ամեն ինչ՝ նույնիսկ անպիտան և պիտանի իր՝ տարբեր ձևի, չափի, գույնի թուղթ, հատակ, պատ, բաժակ, տուփ, նկարակալ,ապակի ձվի արկղ և այլն(անվերջ կարելի է թվարկել): Ոչ ավանդական նկարչության միջոց ենք համարում երեխայի մատիկները, երեխայի ափը,ձողիկները, ծառի ճյուղերը,տերևները, ամրակները, թելերը, կավիճը, պլաստիկե շիշը, բամբակե փայտը, բամբակը, ճմրթած թուղթը, նույնիսկ հյուրասեղանի վրա դրված մրգերն ու սառնարանում պահվող գազարն ու կարտոֆիլը: Այլընտրանքային կամ ոչ ավանդական նկարչության միջոցների բազմազանությունը, դրանց հետ աշխատելը նախադպրոցականի մոտ զարգացնում է իմպրովիզ անելու կարողությունը, ինքնավստահությունը, որտեղից էլ երեխան աստիճանաբար սկսում է իր օրը դարձնել հետաքրքիր, նախաձեռնում է իր անելիքները և ինքնուրույն որոշումներ կայացնել:



Ի՞նչ նպատակ է հետապնդում ոչ ավանդական նկարչությունը

Ոչ ավանդական նկարչության տեխնիկայով աշխատելը ,որը կիրառում են մանկապարտեզում նկարչության պարապմունքների ընթացքում, օգնում է երեխաներին,ովքեր դեռ լիարժեք չեն կարողանում տիրապետել վրձնանկարչության և մատիտիտով նկարելու տեխնիկային: Ոչ ավանդական նկարչության մեթոդները հետաքրքրացնելով երեխայի կատարած աշխատանքը, մի քանի անգամ հեշտացնում է այն երեխայի մոտ զարգացնելով տեսողական վառ երևակայությունը, զբոսանքների և այլ գործընթացների ժամանակ ուշադրության կենտրոնացումը: Օրինակ՝ երեխան զբոսանքի ժամանակ այգում տեսել է խխունջ կամ դեղնած ու կարմրած ծառեր, ավելի հեշտ և պատկերավոր կփոխանցի թղթին այդ ամենը մատիկների և տերևների օգտագործմամբ(ոչ ավանդական նկարչության միջոցներից են), քան վրձնի ու մատիտի միջոցով: Օրինակ՝ զբոսանքի ժամանակ հավաքված տերևները թաթախելով ներկապնակի մեջ լցված գուաշի կամ այլ ներկանյութի մեջ , ներկոտված տերևը դնելով մաքուր թղթի վրա, ապա հեռացնելով երեխան կստանա սախարթախիտ ծառ, իսկ ծառի բունը կստանա մատիկի միջոցով՝մատիկը թաթախելով շականակագույն ներկանյութի մեջ, ներկոտված մատը սեղմելով տերևով ստացված ծառի ներքևի մասում կամ բռունցք արած ձեռքը թաթախելով ներկի մեջ ու սեղմելով թղթին կստանա զբոսանքի ժամանակ բակում

տեսած խխունջի տեսք:Ուստի այս ամենը բնականաբար չի կարող անհետևանք մնալ, ուստի ոչ ավանդական նկարչության միջոցներով աշխատելը նպաստում է ձեռքերի մանր մկանների զարգացմանը, ներկանյութերի հատկություններին,ակտիվացնում է երեխայի շոշափելիքի զգայարանը, հաղորդակցվելու ունակությանը, խթանում է հետաքրքրասիրության առաջացմանը և իհարկե բարձրացնում է երեխայի տրամադրությունը:

Ինչու՞մ է ոչ ավանդական նկարչության գաղտնիքը

Ոչ ավանդական նկարչությունը ունենալով մոտիվացնող և իմպրովիզացնող մեծ հատկություն հետաքրքրում է , թե մեծերին , թե փոքրերին և բոլոր բնագավառներում ու գործընթացներում գտել է իր ուրույն տեղը: Ոչ ավանդական նկարչության միջոցների օգտագործումը հնարավորություն է տալիս երեխաների մոտ զարգացնել ոչ թե բանաձևային նկարչության մտածողություն, այլ ստեղծագործ մտածողությունը: Նույնիսկ, ավելի շուտ, գեղարվեստական և փոխաբերական,որն անմիջականորեն կապված է ստեղծագործության և դիտարկման, ինչպես նաև հոգևոր որակների հետ: Եվ կարևոր չէ, թե որքան լավ է երեխան տիրապետում նկարչության տեխնիկային, քանի որ այստեղ գլխավորը երեխաներին նոր մտքեր սովորեցնելն է, սեփական զգացմունքները թղթին հանձնելն է, և տարբեր գույների օգտագործմամբ թղթին իրենց տրամատրությունը փոխանցելն է: Գեղարվեստական մտածողությունը հիանալի կերպով զարգանում է, երբ երեխաները ներկերով և իմպրովիզացված միջոցներով թղթի թերթիկների վրա հեքիաթ են նկարում: Վերարտադրման այս ձևը կարող է լինել ոչ միայն անհատական, այլև խմբային: Անհատական աշխատանքի ժամանակ երեխան ինքն իր ստեղծագործ մտքերը, իր իսկ երևակայությամբ է փոխանցում թղթին, իսկ խմբակային աշխատանքի ժամանակ երեխան նախ ներկայացնում է իր պատկերացումները ապա համագործակցելով խմբակից ընկերների հետ կատարում են իմպրովիզ ու երևակայական աշխատանք,

յուրաքանչյուրը ընտրելով ներկանյութի գույնը և աշխատելու միջոցը՝ ծողիկներ, ներկի կաթիլներով, ներարկիչներով կամ թելերով, որովհետև երեխաները պաշտում են վառ, գունեղ, ապստրակտ նկարներ նկարել ու դրանց բացատրությունը տալ իրենց ձևով:



Ոչ ավանդական նկարչության տեսակներն ու միջոցները տարիքային տարբեր խմբերում

Ինչպես բոլոր գործունեությունները, այնպես էլ ոչ ավանդական նկարչության պարապմունքները պետք է կազմակերպվի ըստ տարիքի, հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները, ունակություններն ու կարողությունները, չմոռանալ հաշվի առնել երեխաների անհատական առանձնահատկություններն ու կարողությունները, մտավոր ունակություններն ու զարգացվածությունը: Շատ կարևոր է նաև թույլ տալ երեխային ազատ ու անկաշկանդ ընտրություն կատարել նկարչության միջոցների միջև, չսահմանափակելով նրա ազատությունը: Օրինակ՝ ինքս խմբում ունենալով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող,զարգացման հապաղում ունեցող երեխա, պարապմունքների կազմակերպման և ընթացքի ժամանակ չեմ սահմանափակել նրան և չեմ ստիպել աշխատել տվյալ օրվա ընտրված միջոցներով: Երեխան խուսափում էր մատնային նկարչությունից, կիսատ էր թողնում նկարը, եթե ձեռքերը ներկոտվում էին: Երեխային չկաշկանդելու և սեփական իրավունքները պաշտպանելու և ոգևորելու նպատակով թույլ էի տալիս ազատ ընտրություն կատարել՝ վրձին, թե՞ մատիկ: Իմ այդ մոտեցման այդյունքում երեխան ժամանակի ընթացքում, իր իսկ ցանկությամբ,

իր նախաձեռնությամբ մասնակցեց մատնային նկարչությանը,հաղթահարելով սեփական վախերը և կոմպլեքսները:

Կրտսեր տարիքային խմբերում հարկավոր է ավելի հեշտ և մատչելի նկարչության միջոցներ կիրառել, իսկ ոչ ավանդական նկարչությունը իր լայն դռներն է բացում մեր առջև տալով մեծ ընտրության հնարավորություն: Սակայն երեխաների համար ամենասիրելի և զվարճալի միջոցներն են՝

- խցաններով նկարչությունը
- բանջարեղենային դրոշմներով նկարչությունը
- մատնային և ամբողջ ափով նկարչությունը
- բամբակե փայտիկներով նկարչությունը
- ստվերային նկարչությունը
- ներկակաթիլներով նկարչությունը:

Միջին տարիքային խմբում կարող են կիրառել վերը նշված բոլոր տարբերակները, հանձնարարելով համեմատաբար ավելի ծավալուն աշխատանքներ: Սակայն միջին տարիքային խմբերում ամենասիրելի ու հետաքրքիր միջոցներն են՝

- ներկաթիլային նկարչությունը
- փրփրապլաստով նկարչությունը
- ճմռթած թղթով նկարչությունը

- թելերով նկարչությունը
- աղով (խոշոր և մանր) նկարչությունը
- խոզանակով նկարչությունը
- ավազով նկարչությունը
- ստվերային և այլն(ցանկը անվերջ կարելի է թվարկել, սակայն ես նշել եմ տարածված և ավելի շատ գործածվող միջոցները:

Ավագ տարիքային խմբերում ոչ ավանդական նկարչության պարապմունքները կազմակերպերպվում են օգտագերծելով համեմատաբար բարդ միջոցներ և հանձնարարվում է ավելի ծավալուն աշխատանքներ: Այս տարիքի երեխաներին հետաքրքիր և ցանկալի միջոցներն են՝

- փրփուրով նկարչությունը
- ամրակներով նկարչությունը
- կետանցքերով նկարչությունը
- թելերով նկարչությունը
- խոզանակներով նկարչությունը
- աղով նկարչությունը
- շաքարավազով նկարչությունը
- ձվի կեղևով նկարչությունը
- ջրանկարչությունը(բակային պարապմունք)
- տարբեր նյութերի վրա նկարչությունը:

Դե իհարկե սխալ կլինի չանդրադառնալ գույների ստացմանը, որի գործընթացից երեխան ստանում է մեծ բավարարվածություն, հիացմունք և ձեռք է բերում գույների ու ներկանյութերի հատկությունների մասին գիտելիքներ ու հմտություններ: Գույների ստացման այլ ընտրանքային տարբերակներից է ՝ աջ ձեռքի ափը ներկել կարմիր գուաշով կամ այլ ներկանյութով, իսկ ձախ ձեռքի ափը դեղին գուաշով, ապա 2 ձեռքերն իրար քսելով կստանանք նոր գույն՝ նարնջագույն: Այս մեթոդը կարելի է ամբողջ խմբով կատարել՝ զույգերով(մի երեխայի ձեռքի ափին քսել կապույտ ներկանյութ, մյուս երեխայի ափին դեղին, երեխաները ձեռքերը իրար քսելով կստանան նոր գույն) : Այս միջոցը կարող ենք կիրառել տարիքային բոլոր խմբերում՝ կրտսերից, մինչև ավագ, ըստ տարիքի շատացնելով փորձարկվող գույներն ու ներկանյութերը: Այս գործընթացը երեխային տալիս է ներկանյութի հետ անմիջական շփում, որի ընթացքում երեխան տեսնում է նոր գույնի ստացումն ու գործընթացը,

որն իր հերթին հանդիսանում է գունազգացողության զարգացման ամենաբարձր ձևը(ըստ իս):

Ոչ ավանդական նկարչության հետաքրքրաշարժ պարապմունքների ցանկից՝ *«Մանր աղով նկարչություն»*

Տարիք_ 5 և ավելի բարձր: Օգտագործվող նյութերն ու միջոցներն են՝

- թուղթ
- մանր աղ
- վրձին
- գուաշ (տարբեր գույնի)
- նմուշ օրինակ:

Նպատակ՝

- խթանել հետաքրքրասիրությունը,
- ծանոթացել աղի հատկություններին,
- Սովորեցնել աղով նոր ու հետաքրքիր պատկերներ ստանալու ձևերը
- Զարգացնել ուշադրությունն ու երևակայությունը,
- զարգացնել կոկիկ աշխատելու կարողությունը
- դաստիարակել համբերատարություն:

Ընթացքը՝

Դիտել և ուսումնասիրել նկարվող նյութը, օրինակ գունավոր գնդակը կամ ծաղիկը: Մատիտով թղթի վրա ուրվագծել տվյալ պատկերը՝ գունավոր գնդակ: Խոնավացնել թղթի մակերեսը և աղամանով աղը լցնել խոնավ մակերեսի վրա: Երբ աղածածկ մակերեսը չորանա, վրձնի օգնությամբ գունավորել պատկերը: Մինչ հաջորդ գույնով աշխատելը, պետք է թողնել՝ նախորդ գույնը չորանա: Աշխատանքի այս տեխնիկայով կարելի է ստանալ ամպիկներ, թիթեռ, ծուխ, ձյուն, ծաղիկ և այլն:

Աշխատանքի վերջնական տեսքը

Կատարված աշխատանքի պատկերը լինում է անհարթ ու փոքր ինչ փայլուն, ինչը նկարին տալիս է հետաքրքիր և յուրահատուկ տեսք:

Ծանոթություն՝

Աղը թղթի վրա կարելի է լցնել նաև մատներով, այդպես երեխան ավելի լավ կզգա և կծանոթանա աղի հատկություններին: Իսկ աշխատանքը գունավորելու համար կարող ենք օգտագործել բամբակե բարձիկ: Կարող ենք նաև պատկերը միանգամից ներկանյութով պատել (ցանկալի է գուաշ կամ ջրով խիտ բացված ջրաներկ), ու աղը լցնել վրան, սպասել չորանա, ապա անցնել հաջորդ գույնին:Այս եղանակով աշխատելու ընթացքում երեխան անմիջականորեն տեսնում է թե ինչպես է աղի սպիտակ մանր բյուրեղիկները ընկնելով ներկված հատվածի վրա փոխում իրենց գույնը և դա ավելի է հետաքրքրացնում աշխատանքը և ոգևորում: Փոքր թվով խմբերի հետ ոչ ավանդական նկարչության պարապմունքներն ավելի հասանելի է դառնում և դաստիարակը հասցնում է անհատական մոտեցում և օգնություն ցուցաբերել բոլոր երեխաներին, իսկ կատարված աշխատանքն էլ ավելի գեղեցիկ, կոկիկ է լինում, Երեխաներն էլ բավարարված:



24 - 04 2023 r.

12-03-2023թ
«Մամիկ տատիկ հեքիաթներում»
Էրիկ Հայր

Եզրակացություն

Ուսումնասիրելով և ամփոփելով ոչ ավանդական նկարչության խնդիրները, նպատակներն ու միջոցները, կարող ենք վստահ ասել, որ նախադպրոցական տարիքի երեխաների կրթադաստիարակչական գործնթացը կազմակերպելու անփոխարինելի միջոց է, որը միաժամանակ կարող ենք համարել զարգացնող միջավայրի ապահովման հիմնակետ: Այսինքն ոչ ավանդական նկարչության և առհասարակ ոչ ավանդական կերպարվեստային պարամպունքների հաճախակի կազմակերպումը զարգացնում է նախադպրոցական տարիքի երեխայի վառ երևակայությունը, ստեղծագործ միտքը, գունազգացողությունը, գեղագիտական ճաշակը, մանր մոտորիկան, տարածական մտածողությունը, ինքնուրույնությունը, աշխատասիրությունը, ինքնավստահությունը ,երեխան ձեռք է բերում նոր գիտելիքներ, սովորում է նոր նկարչական տեխնիկաներ: Երեխան սովորելով ոչ ավանդական նկարչության տեխնիկան, սկսում է այն կիրառել ավելի հաճախ և վստահ, երեխան սկսում է ինքնավստահ և անկաշկանդ իրականացնել իր ստեղծագործ մտքերը : Ամփոփելով վերը նշված բոլոր կետերը, պետք է ասեմ, որ ոչ ավանդական նկարչությունը և ոչ ավանդական կերպարվեստային գործունեության մեթոդիկայի կիրառումը մի քանի անգամ հեշտացնում է նախադպրոցական հաստատություններում աշխատող դաստիարակների աշխատանքը, այն ավելի հետաքրքիր և տեսանելի դարձնելով:

Օգտագործված գրականության ցանկ

1. Մանկապարտեզի կրտսեր 2-րդ խմբի կրթական համալիր ծրագիր 3-4 տարեկաններ
2. 3-6 տարեկան երեխաների կրթական ծառայությունների կազմակերպումն այլընտրանքային մոդելներով (դաստիարակի ուղեցուց)
3. Ոչ ավանդական նկարչություն (ուսումնաօժանդակ ձեռնարկ, հեղինակ Ժ. Ավետիսյան, Գ. Փոթիկյան)
4. narineapoyan.wordpress.com
5. verjinekagaryanwordpress.wordpress.com
6. Pinterest